Press Unit
Unité de la Presse

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

Փաստաթերթ՝ Ընտանեկան բռնություն

Ապրիլ 2022թ.

Սույն Փաստաթերթը չի պարտավորեցնում Դատարանը
և սպառիչ չէ

Ընտանեկան բռնություն

"... Ընտանեկան բռնության հարցը, որը կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ սկսած ֆիզիկականից մինչև հոգեբանական կամ բանավոր վիրավորանքի... ընդհանուր խնդիր է, որը վերաբերում է բոլոր անդամ պետություններին և որը միշտ չէ, որ ի հայտ է գալիս, քանի որ այն հաճախ տեղի է ունենում անձնական հարաբերություններում կամ փակ շրջաններում, ընդ որում դրա ազդակիրը ոչ միայն կանայք են: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդունում է, որ տղամարդիկ նույնպես կարող են ենթարկվել ընտանեկան բռնության և, որ երեխաները նույնպես հաճախ են տուժում այդ երևույթից՝ ուղղակիորեն թե անուղղակիորեն: ...» (***Օփուզն ընդդեմ Թուրքիայի***, 2009 թվականի հունիսի 9-ի թիվ 132 վճիռը):

Կյանքի իրավունք (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդված)

Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի

31 մայիսի 2007թ.

2002թ. նոյեմբերի 2-ին դիմումատուն քրեական հայց է ներկայացրել ամուսնու դեմ՝ իր վրա հարձակվելու և էլեկտրական մալուխով ծեծելու համար: Նա ամուսնու ուղեկցությամբ ավելի ուշ փորձել է հետ վերցնել քրեական պատասխանատվություն նախատեսող իր բողոքը: Այնուհետև, նա ձևափոխել է բողոքն այնպես, որ իր ամուսնու ենթադրյալ գործողությունները դիտարկվեն որպես աննշան իրավախախտում, որը հետագա քայլերի ձեռնարկել չի պահանջում: 2002 թվականի դեկտեմբերի 31-ին ամուսինը զենքի կիրառմամբ սպանել է 1997 և 2001 թվականներին ծնված նրա դստերն ու որդուն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանում դիմումատուն պնդեց, որ ոստիկանությունը, տեղյակ լինելով իր ամուսնու դաժան և սպառնալից պահվածքի մասին, չի ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ պաշտպանելու իր երեխաների կյանքը: Նա նաև բողոքեց, որ իրեն փոխհատուցում չեն տրամադրել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի **2-րդ հոդվածի** (կյանքի իրավունք) **խախտում՝** իշխանությունների կողմից դիմումատուի երեխաների կյանքը պաշտպանելու ձախողման պատճառով: Դատարանը նշել է, որ հաշվի առնելով 2002 թվականի նոյեմբերի քրեական բողոքը և 2002 թվականի դեկտեմբերին արտակարգ իրավիճակների ծառայություն կատարված հեռախոսազանգերը, տեղի ոստիկանությունը տեղյակ է եղել դիմումատուի ընտանիքում տիրող իրավիճակի մասին: Նման իրավիճակում, գործող օրենսդրության համաձայն, ոստիկանությունը պարտավոր էր՝ գրանցել դիմումատուի քրեական բողոքը, անհապաղ քրեական հետաքննություն և քրեական գործ հարուցել դիմումատուի ամուսնու դեմ, պատշաճ կերպով գրանցել հրատապ օգնության կանչերը, տեղեկացնել իրավիճակի մասին հաջորդ հերթափոխին, և միջոցներ ձեռնարկել այն պնդումների վերաբերյալ, որ դիմումատուի ամուսինը որսորդական հրացան է ունեցել և սպառնացել է գործի դնել

այն: Սակայն, ներգրավված ոստիկամության ծառայողներից մեկը նույնիսկ օգնել էր դիմումատուին և նրա ամուսնուն՝ փոփոխելու նրա 2002թ. նոյեմբերի քրեական բողոքը, որպեսզի այն դիտարկվի որպես աննշան հանցագործություն, որը հետագա քայլեր չձեռնարկել չի պահանջում: Եզրափակելով, ինչպես հաստատել են ներպետական դատարանները, և ընդունել էր Սլովակիայի կառավարությունը, ոստիկանությունը թերացել է իր պարտավորությունների մեջ, և այդ ձախողումների ուղղակի հետևանքը եղել է դիմումատուի երեխաների մահը: Դատարանն այնուհետև որոշել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի **13-րդ հոդվածի** (արդյունավետ պաշտպանության իրավունք) **խախտում**, քանի որ դիմումատուն պետք է հնարավորություն ունենար դիմել նյութական վնասի փոխհատուցման համար, սակայն իրավական պաշտպանության նման միջոցը նրան հասանելի չի եղել:

Բոանկո Տոմաշիչն և այլք ընդդեմ Խորվաթիայի

15 հունվարի 2009թ.

Դիմումատուները երեխայի և նրա մոր հարազատներն էին, որոնց ամուսինը/հայրը սպանել է և՛ նրանց, և՛ իրեն, բանտից ազատ արձակվելուց մեկ ամիս անց, որտեղ նա պահվել է նրանց նկատմամբ մահվան սպառնալիքների համար: Նրան ի սկզբանե պարտադրվել է պարտադիր հոգեբուժական բուժում անցնել բանտում գտնվելու ժամանակ և ազատվելուց հետո, ըստ անհրաժեշտության, սակայն ազատ արձակվելուց հետո վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել դադարեցնել նրա բուժումը: Դիմումատուները բողոքել են, մասնավորապես, որ Խորվաթիայի պետությունը չի ձեռնարկել համապատասխան միջոցներ երեխային և նրա մորը պաշտպանելու համար և նրանց մահվան համար պետության հնարավոր պատասխանատվության վերաբերյալ արդյունավետ հետաքննություն չի իրականացրել:

Դատարանը արձանագրել է Կոնվենցիայի **2-րդ հոդվածի** (կյանքի իրավունք) **խախտում՝** երեխայի և նրա մոր մահը կանխելու համար Խորվաթիայի իշխանությունների կողմից համապատասխան քայլեր չձեռնարկելու պատճառով: Այն մասնավորապես նշել է, որ ներպետական դատարանների և հոգեբուժական փորձաքննության եզրակացությունները, անկասկած, ցույց են տվել, որ իշխանությունները տեղյակ են եղել մոր և երեխայի կյանքին ուղղված սպառնալիքների լրջության մասին, և որ նրանց պաշտպանելու համար պետք է ձեռնարկվեին բոլոր ողջամիտ քայլերը: Դատարանը նաև նշել է իշխանությունների վարքագծի մի շարք թերություններ, այդպես՝ թեև քրեական դատավարության նպատակներով կազմված հոգեբուժական զեկույցում ընդգծվել է ամուսնու հոգեբուժական բուժման շարունակական անհրաժեշտությունը, Խորվաթիայի կառավարությունը չէր ապացուցել, որ նման բուժում իրականում եղել է և պատշաճ կերպով է իրականացվել, ներկայացված փաստաթղթերը ցույց են տվել, որ ամուսնու բուժումը բանտում սահմանափակվել է բանտի աշխատակիցների հետ զրույցներով, որոնցից ոչ ոք հոգեբույժ չի եղել, ոչ համապատասխան կանոնակարգերը, ոչ էլ դատարանի վճիռը, որը պարտադրում է պարտադիր հոգեբուժական բուժում, բավարար մանրամասներ չեն պարունակել այն մասին, թե ինչպես պետք է իրականացվի բուժումը. և, վերջապես, ամուսինը մինչ բանտից ազատվելը չի հետազոտվել՝ գնահատելու համար, թե արդյոք նա դեռևս վտանգ է ներկայացնում երեխայի և նրա մոր համար: Ուստի, Դատարանը եզրակացրել է, որ համապատասխան ներպետական մարմինները չեն ձեռնարկել բավարար միջոցներ նրանց կյանքը պաշտպանելու համար:

Օփուզն ընդդեմ Թուրքիայի

9 հունիսի 2009թ.

Տե՛ս ստորև, «Խտրականության արգելում» մասում:

Դուրմազն ընդդեմ Թուրքիայի

13 նոյեմբերի 2014թ.

Դիմումատուի դուստրը մահացել է հիվանդանոցում այն բանից հետո, երբ ամուսինը նրան տեղափոխել է շտապօգնության բաժանմունք՝ բժիշկներին հայտնելով, որ նա դեղերի մեծ չափաբաժին է ընդունել: Ոստիկանությունում հարցաքննվելիս նա նաև հայտնել է, որ նույն օրը ամուսինները վիճաբանել են, և ինքը հարվածել է կնոջը: Մահացածի հայրը հետագայում բողոք է ներկայացրել դատախազին՝ նշելով, որ իր դուստրը ինքնասպանություն չի գործել և պնդելով, որ նրա մահվան համար

պատասխանատու է ամուսինը: Դատախազի կողմից իրականացված հետաքննությունը եզրակացրել է, որ նա ինքնասպանություն է գործել: Դիմումատուի առարկությունը մերժվել է ներպետական դատարանների կողմից: Դատարանի առջև դիմումատուն բողոքել է, որ իր դստեր մահվան հետաքննությունն անարդյունավետ է եղել:

Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի **2-րդ հոդվածի** (կյանքի իրավունք) **խախտում** իր ընթացակարգային առումով՝ թուրքական իշխանությունների կողմից դիմումատուի դստեր մահվան գործով արդյունավետ հետաքննություն չկատարելու պատճառով: Ինչպես *Opuz*-ի գործով (տե՛ս վերևում), այն մասնավորապես նշեց, որ ընտանեկան բռնությունը հիմնականում ազդում է կանանց վրա, և որ Թուրքիայում ընդհանուր և խտրական դատական պասիվությունը ստեղծել է ընտանեկան բռնության համար նպաստավոր միջավայր:

Չիվեկն ընդդեմ Թուրքիայի

23 փետրվարի 2016թ.

Այս գործը վերաբերում էր դիմումատուների մոր սպանությանը նրանց հոր կողմից: Դիմումատուները, մասնավորապես, բողոքել են, որ թուրքական իշխանությունները չեն կատարել իրենց մոր կյանքը պաշտպանելու իրենց պարտավորությունները:

Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի **2-րդ հոդվածի** (կյանքի իրավունք) **խախտում**: Այն, մասնավորապես, պարզել է, որ թեև թուրքական իշխանությունները տեղեկացված են եղել դիմումատուների մոր կյանքին սպառնացող իրական և լուրջ վտանգի մասին և չնայած սպառնալիքների և ոտնձգությունների վերաբերյալ նրա շարունակական բողոքներին, նրանք չեն ձեռնարկել իրենց համար հասանելի միջոցները, որպեսզի կանխեն նրա սպանությունը ամուսնու կողմից:

Յաիմե Կուլիչն ընդդեմ Թուրքիայի

28 հունիսի 2016

Տես ստորև՝ «Խտրականության արգելում» մասում:

Տալահան ընդդեմ Իտալիայի

2 մարտի 2017թ.

Այս գործը վերաբերում էր դիմումատուի ամուսնու կողմից բռնության կիրառմանը, որը հանգեցրել է նրա որդու սպանությանը և իր նկատմամբ մահափորձին:

Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի **2-րդ հոդվածի** (կյանքի իրավունք) **խախտում՝** դիմումատուի որդու սպանության և դիմումատուի մահափորձի պատճառով: Այն, մասնավորապես, գտել է, որ իտալական իշխանությունների կողմից անհապաղ միջոցներ չձեռնարկելու պատճառով դիմումատուի կողմից ներկայացված բողոքն ապարդյուն է եղել՝ ստեղծելով բռնության ակտերի կրկնությանը նպաստող անպատժելիության իրավիճակ, որն այնուհետև հանգեցրել է դիմումատուի սպանության փորձին և նրա որդու մահվան: Հետևաբար, իշխանությունները չեն կատարել համապատասխան անձանց կյանքը պաշտպանելու իրենց պարտավորությունը: Դատարանը նաև արձանագրել է Կոնվենցիայի **3-րդ հոդվածի** (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում) **խախտում՝** իշխանությունների կողմից դիմումատուին ընտանեկան բռնության գործողություններից պաշտպանելու իրենց պարտավորությունների չկատարման պատճառով: Այս առումով, այն մասնավորապես նշել է, որ դիմումատուն իր երեխաների հետ ապրել է բռնության մթնոլորտում, որն այնքան լուրջ էր, որ կարող էր համարվել դաժան վերաբերմունք, և որ իշխանությունների կողմից քրեական վարույթն իրականացնելու եղանակը վկայում է դատական պասիվության մասին, որն անհամատեղելի է 3-րդ հոդվածի հետ: Ի վերջո Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի **2-րդ և 3-րդ հոդվածներով զուգորդված 14-րդ հոդվածի** (խտրականության արգելում) **խախտում**, գտնելով, որ դիմումատուն որպես կին խտրականության զոհ է դարձել իշխանությունների անգործության պատճառով, որոնք թերագնահատել են խնդրո առարկա բռնությունը և, հետևաբար, ըստ էության ընդունել այն:

Տրոշանան ընդդեմ Ալբանիայի

4 օգոստոսի 2020թ.

Այս գործը վերաբերում էր 2009 թվականին դիմումատուի վրա թթվանյութ ցփնելուն: Դիմումատուն կասկածում էր, որ հարձակման հետևում կանգնած է իր նախկին

ամուսինը, որին նա մեղադրել էր ընտանեկան բռնության մեջ: Նա մասնավորապես պնդեց, որ Ալբանիայի իշխանությունները միջոցներ չեն ձեռնարկել՝ պաշտպանելու իրեն այդ հարձակումից և արագ և արդյունավետ հետաքննություն անցկացնելու՝ հարձակվողին հայտնաբերելու, քրեական հետապնդում իրականացնելու և պատասխանատվության կանչելու համար:

Դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի **2-րդ հոդվածի** (կյանքի իրավունք) **խախտում** ըստ էության տեցի չի ունեցել՝ գտնելով, որ Ալբանիայի պետությունը չի կարող պատասխանատվություն կրել հարձակման համար: Այն մասնավորապես նշեց, որ եթե պետությունը տեղյակ լիներ դիմումատուին սպառնացող վտանգի մասին, ապա պարտավոր կլիներ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել: Սույն գործով, սակայն, ազգային իշխանությունները դեպքից հետո են միայն իմացել դիմումատուի նախկին ամուսնու բռնի պահվածքի մասին: Մյուս կողմից, Դատարանը արձանագրել է **2-րդ հոդվածի խախտում** ընթացակարգային առումով՝ գտնելով, որ իշխանությունների արձագանքը թթվանյութ ցփնելու միջոցով հարձակմանը եղել է անարդյունավետ: Այս առումով, Դատարանը մասնավորապես նշեց, որ հարձակման հետաքննությունը, որն ուներ գենդերային բռնության նշաններ և, հետևաբար, պետք է դրդեր իշխանություններին հատուկ ջանասիրությամբ արձագանքել, նույնիսկ չկարողացավ բացահայտել նրա վրա ցփնված նյութը: Ավելին, հետաքննությունը դադարեցվել է 2010թ.-ին, առանց պատասխանատու անձին նույնականացնելու, և դիմումատուին դրա առաջընթացի մասին այդ ժամանակից ի վեր որևէ տեղեկություն չի տրվել, չնայած նրա բազմիցս հարցումներին:

Կուրտն ընդդեմ Ավստրիայի

15 հունիսի 2021թ. (Մեծ պալատ)

Այս գործը վերաբերում էր դիմումատուի բողոքին առ այն, որ Ավստրիայի իշխանությունները չեն կարողացել պաշտպանել իրեն և իր երեխաներին իր բռնի ամուսնուց, ինչը հանգեցրել է նրան, որ նա սպանել է իրենց որդուն: Նա մասնավորապես պնդել է, որ ինքը հատուկ հայտնել է ոստիկանությանը, որ վախենում է իր երեխաների կյանքի համար:

Դատարանն արձանագրել է, որ սույն գործում Կոնվենցիայի **2-րդ հոդվածի** (կյանքի իրավունք) **խախտում տեղի չի ունեցել**: Այն գտել է, որ Ավստրիայի իշխանությունները ցուցաբերել են անհրաժեշտ հատուկ ջանասիրություն՝ արագ արձագանքելով դիմումատուի կողմից ընտանեկան բռնության մասին պնդումներին և պատշաճ կերպով հաշվի առնելով գործի՝ որպես ընտանեկան բռնության կոնկրետ համատեքստը: Նրանք իրականացրել էին ռիսկերի անկախ, նախաձեռնողական և համապարփակ գնահատում և կայացրել էին արգելանքի և պաշտպանական որոշում: Ռիսկի գնահատման արդյունքում դիմումատուի որդու համար իրական և անմիջական մահացու վտանգ չի հայտնաբերվել: Հետևաբար, իշխանությունների կողմից այդ կապակցությամբ կանխարգելիչ օպերատիվ միջոցառումներ ձեռնարկելու պարտավորություն չի առաջացել:

Տիեդիձեն ընդդեմ Վրաստանի

8 հուլիսի 2021թ.

Տե՛ս ստորև, «Խտրականության արգելում» մասում:

Ա–ն և Բ–ն ընդդեմ վրաստանի (թիվ 73975/16)

10 թետրվարի 2022թ.[1]

Տես ստորև, «Խտրականության արգելում» մասում:

Ը–ն և այլք ընդդեմ Բուլղարիայի (թիվ 9077/18)

22 մարտի 2022թ.[2]

Այս գործով դիմումատուները մի կնոջ մայրն ու դուստրերն էին, ում ամուսնը սպանել էր Սոֆիայի սրճարաններից մեկում, անմիջապես շրջանի դատախազությունը լքելուց հետո, որտեղ նա եկել էր բողոքելու, որ ամուսինն ատրճանակ էր պահում և նա վախենում էր իր կյանքի համար: Սպանությանը նախորդող տարիների և ամիսների ընթացքում նա մի քանի նմանատիպ բողոքներ էր ներկայացրել կապված իր նկատմամբ ամուսնու, բռնի և մոլուցքային վերաբերմունքի հետ: Դիմումատուները, մասնավորապես, պնդեցին, որ Բուլղարիայի իշխանությունները լուրջ չեն ընդունել իրենց մերձավոր ազգականի բողոքներն ամուսնու վերաբերյալ և չեն ձեռնարկել միջոցներ՝ կանխելու նրա կյանքի վտանգը: Դատարանն արձանագրել է

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք) **խախտում**: Այն, մասնավորապես, գտել է, որ իշխանությունները չեն կարողացել անհապաղ արձագանքել դիմումատուների մերձավոր ազգականի արժանահավատ բողոքներին և չեն կատարել նրան սպառնացող վտանգի պատշաճ գնահատում՝ ելնելով ընտանեկան բռնության կոնկրետ համատեքստից և դինամիկայից: Եթե նրանք այդպես վարվեին, ապա կհամոզվեին, որ ամուսինը իրական և անմիջական վտանգ էր ներկայացնում նրա կյանքի համար, հնարավոր կլիներ առգրավել նրա ատրճանակը, ձերբակալել նրան խափանման միջոցը խախտելու համար և/կամ դիմողների ազգականին ոստիկանության պաշտպանության տակ վեցնել: Վտանգին դիմակայելու բոլոր նման քայլերը Բուլղարիայի ներքին օրենսդրության համաձայն հնարավոր կլինեին: Դատարանը, սակայն, չի արձանագրել **Կոնվենցիայի 2-րդ հոդվածով զուգորդված 14-րդ հոդվածի** (խտրականության արգելք) **խախտում՝** չգտնելով կանանց նկատմամբ բռնության հանդուրժողականության մասին որևէ ապացույց՝ ոչ ընդհանուր առմամբ Բուլղարիայում, ոչ էլ ոստիկանության կողմից դիմումատուների մերձավոր ազգականի գործի վարույթում

Լանդին ընդդեմ Իտալիայի

7 ապրիլի 2022թ.[3]

Սույն գործով դիմումատուն պնդեց, որ իտալական պետությունը չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ պաշտպանելու իրեն և իր երկու երեխաներին իր զուգընկերոջ կողմից գործադրված ընտանեկան բռնությունից, որը 2018թ. հանգեցրել է նրա մեկամյա որդու սպանությանը և դիմումատուի մահափորձի: Նրա կարծիքով նաև իրավական պաշտպանության բացակայությունը և ընտանեկան բռնության վերաբերյալ իր պնդումներին իշխանությունների կողմից համապատասխան արձագանքի մերժումը հավասարազոր է գենդերային հիմքով խտրական վերաբերմունքի: Դատարանը որոշեց, որ սույն գործում տեղի է ունեցել Կոնվենցիայի **2-րդ հոդվածի** (կյանքի իրավունք) **խախտում՝** գտնելով, որ չի կարելի համարել, որ Իտալիայի իշխանությունները ցուցաբերել են անհրաժեշտ ջանասիրություն, և որ նրանք, հետևաբար, չեն կատարել դիմումատուի և նրա որդու կյանքը պաշտպանելու իրենց դրական պարտավորությունը: Դատարանը, մասնավորապես, նշել է, որ ազգային իշխանությունները չեն կատարել իրենց պարտականությունը՝ անհապաղ և ակտիվ գնահատել դիմումատուի և նրա երեխաների նկատմամբ իրականացված բռնի գործողությունների կրկնության վտանգը և չեն ձեռնարկել օպերատիվ և կանխարգելիչ միջոցներ՝ վտանգը մեղմելու և շահագրգիռ անձանց պաշտպանելու համար: Մասնավորապես, իշխանությունները պասիվություն էին դրսևորել դիմումատուի նկատմամբ դաժան վերաբերմունքի լուրջ ռիսկի դիմաց, և նրանց անգործությունը թույլ էր տվել դիմումատուի զուգընկերոջը շարունակել անարգել և անպատժելիորեն սպառնալ, հետապնդել տուժողին և հարձակվել նրա վրա: Իշխանությունները պետք է գնահատեին բռնության վերսկսման վտանգը և ընդունեին համապատասխան և համարժեք միջոցներ: Նման միջոցներ կարող էին ընդունվել իշխանությունների կողմից՝ իտալական օրենսդրության համաձայն՝ անկախ նրանից, թե տուժողի կողմից եղել է բողոք կամ վտանգի ընկալման որևէ փոփոխություն, թե ոչ: Սույն գործով Դատարանը, սակայն, չհամարեց, որ վիճարկվող թերությունները կարող են ինքնին մատնանշել իշխանությունների կողմից որևէ խտրական վերաբերմունքի դրսևորում: Հետևաբար, այն **անընդունելի է համարել**, որպես ակնհայտ անհիմն, Կոնվենցիայի **2-րդ հոդվածով զուգորդված 14-րդ հոդվածի** (խտրականության արգելք) խախտման վերաբերյալ դիմումատուի բողոքը:

[1]. Այս վճիռը ուժի մեջ կմտնի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասով (վերջնական վճիռներ) սահմանված հանգամանքներում:
[2]. Այս վճիռը ուժի մեջ կմտնի Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասով (վերջնական վճիռներ) սահմանված հանգամանքներում:
[3]. Այս վճիռը ուժի մեջ կմտնի Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասով (վերջնական վճիռներ) սահմանված հանգամանքներում:

Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում (Կոնվենցիայի 3-րդ հոդված)

Ընտանեկան բռնությունից համարժեք պաշտպանություն ապահովելու իշխանությունների պարտավորությունը

Ե.Ս.–ն և այլք ընդդեմ Սլովակիայի (թիվ 8227/04)

15 սեպտեմբերի 2009թ.

2001 թվականին առաջին դիմումատուն թողեց իր ամուսնուն և քրեական գործ հարուցեց նրա դեմ՝ իրեն և իր երեխաների (ծնված 1986, 1988 և 1989 թվականներին) հանդեպ դաժան վերաբերմունք ցուցաբերելու և նրանց դուստրերից մեկի նկատմամբ սեռական բռնություն գործադրելու համար: Երկու տարի անց նա դատապարտվեց բռնության և սեռական բռնության համար: Սակայն ամուսնուն իրենց տնից հեռանալ հարկադրելու նրա խնդրանքը մերժվել է, քանի որ դատարանը գտել է, որ իրավասու չէ ամուսնու համար սահմանափակել սեփականության մատչելիությունը (նա կարող էր դադարեցնել վարձակալությունը միայն ամուսնալուծվելիս): Հետևաբար, առաջին դիմումատուն և նրա երեխաները ստիպված են եղել հեռանալ իրենց ընկերներից և ընտանիքից, և երեխաներից երկուսը ստիպված են եղել փոխել դպրոցը: Նրանք բողոքել են, որ իշխանությունները չեն կարողացել պատշաճ կերպով պաշտպանել իրենց ընտանեկան բռնությունից:

Դատարան արձանագրեց, որ Սլովակիան չի ապահովել առաջին դիմումատուին և նրա երեխաներին անհրաժեշտ անհապաղ պաշտպանությունը ամուսնու բռնությունից՝ **խախտելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածը** (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում) և **8-րդ հոդվածը** (անձնական և ընտանեկան կյանքի իրավունք): Դատարանը գտավ, որ, հաշվի առնելով մեղադրանքների բնույթն ու խստությունը, առաջին դիմումատուի և երեխաների պաշտպանությունը պահանջվել է անմիջապես, ոչ թե մեկ կամ երկու տարի անց: Առաջին դիմումատուն հետագայում չի կարողացել դիմել վարձակալությունը դադարեցնելու համար, մինչև 2002թ. մայիսին իր ամուսնալուծության ավարտը, կամ դիմել նախկին ամուսնուն ամուսնական տնից հեռացնելու համար որոշում կայացնելու համար՝ մինչև 2003թ. հունվարին օրենքի փոփոխությունը: Այդ պատճառով նա միջանկյալ ժամանակահատվածում մնացել է առանց արդյունավետ պաշտպանության իր և երեխաների համար:

Եռեմիան և այլք ընդդեմ Մոլդովայի Հանրապետության

28 մայիսի 2013թ.

Տե՛ս ստորև, «Խտրականության արգելում» մասում:

Տե՛ս նաև. **Մունտյանուն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության**, 2020 թվականի մայիսի 26-ի վճիռը:

Ռումոր–ն ընդդեմ Իտալիայի

27 May 2014

Տես ստորև, «Խտրականության արգելում» մասում:

Մ.Գ.–ն ընդդեմ Թուրքիայի (թիվ 646/10)

22 մարտի 2016թ.

Տե՛ս ստորև, «Խտրականության արգելում» մասում:

Ն.Պ.–ն և Ն.Ի.–ն ընդդեմ Բուլգարիայի (թիվ 72226/11)

3 մայիսի 2016թ. (գործի ընդունելի լինելու մասին որոշում)

Դիմումատուները՝ մի կին և նրա անչափահաս որդին, բողոքել են, որ իրենք ենթարկվել են ընտանեկան բռնության և, որ Բուլղարիայի իշխանությունների կողմից չեն ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ զուգընկերոջ և հոր բռնի գործողություններից պաշտպանելու համար:

Դատարանը բողոքն **անընդունելի** համարեց որպես ակնհայտ անհիմն՝ չարձանագրելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածով (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում), 13-րդ հոդվածով (արդյունավետ պաշտպանության

իրավունք) կամ 14-րդ հոդվածով (խտրականության արգելք) սահմանված պետության դրական պարտավորությունների խախտում: Այն մասնավորապես նշեց, որ Բուլղարիայի իշխանությունները համապատասխան ժամանակատվածներում ձեռնարկել են դիմումատուների ֆիզիկական անձեռնմխելիությունը պաշտպանելուն ուղղված մի քանի համարժեք քայլեր:

Տալպիսն ընդդեմ Իտալիայի

2 մարտի 2017թ.

Տե՛ս վերևում, «Կյանքի իրավունք» մասում:

Բալսան ընդդեմ Ռումինիայի

23 մայիսի 2017թ.

Տես ստորև, «Խտրականության արգելում» մասում:

Վոլոդինան ընդդեմ Ռուսաստանի

9 հուլիսի 2019թ.

Տե՛ս ստորև, «Խտրականության արգելում» մասում:

Տե՛ս նաև՝ **Բաբսովան ընդդեմ Ռուսաստանի**, 2019 թվականի հոկտեմբերի 22-ի վճիռը (Հանձնաժողով):

Գալովիչն ընդդեմ Խորվաթիայի

31 օգոստոսի 2021թ.

Այս գործը վերաբերում էր դիմումատուի մի քանի մեղադրական դատավճիռներին՝ ընտանեկան բռնության մի քանի անհնշան իրավախախտումների համար դատավարություններում և քրեական վարույթում: Դիմումատուն, մասնավորապես, բողոքել է, որ ինքը երկու անգամ դատվել և դատապարտվել է նույն արարքի համար: Դատարանն արձանագրել է, որ դիմումատուի նկատմամբ Կոնվենցիայի **թիվ 7 Արձանագրության 4-րդ հոդվածի խախտում** (երկու անգամ նույն արարքի համար չդատվելու կամ չպատժվելու իրավունք) տեղի չի ունեցել: Նշելով, մասնավորապես, որ դիմումատուի գործով երկու վարույթները Խորվաթիայի օրենսդրության համաձայն ընտանեկան բռնության նկատմամբ ինտեգրված և համահունչ մոտեցման մաս են կազմել, այն պարզել է, որ նման ինտեգրված համակարգը թույլ է տվել դիմումատուին պատժել բռնության անհատական գործողությունների համար՝ նվազ կոշտ արձագանքով անհնշան իրավախախտումների վերաբերյալ վարույթում, որին հաջորդել է ավելի լուրջ քրեական արձագանք նրա վարքագծին:

Տունիկովան և այլք ընդդեմ Ռուսաստանի

14 դեկտեմբերի 2021թ.

Այս գործը վերաբերում էր ընտանեկան բռնության ակտերին, այդ թվում՝ մահվան սպառնալիքներին, մարմնական վնասվածքներին և ծանր անդամահատման մեկ դեպքին, որոնք չորս դիմումատուները կրել են իրենց նախկին զուգընկերների կամ ամուսինների կողմից: Դիմումատուները բողոքել են, մասնավորապես, Ռուսաստանի պետության կողմից իրենց ընտանեկան բռնությունից պաշտպանելու ձախողման, այդ կապակցությամբ պաշտպանության միջոցների բացակայության մասին, և որ գենդերային բռնության դեմ պայքարի ընդհանուր ձախողումը հավասարազոր է եղել կանանց նկատմամբ խտրականության:

Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի **3-րդ հոդվածի** (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում) **խախտում**, գտնելով, որ Ռուսաստանի իշխանությունները չեն կարողացել ստեղծել ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքարի իրավական դաշտ, չեն գնահատել կրկնվող բռնության ռիսկերը, և չեն իրականացրել արդյունավետ հետաքննություն դիմումատուների կողմից կրած ընտանեկան բռնության վերաբերյալ: Այն նաև արձանագրել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի **3-րդ հոդվածով զուգորդվածի 14-րդ հոդվածի** (խտրականության արգելում) **խախտում՝** գտնելով, որ ընտանեկան բռնության վտանգից պաշտպանվելու տեսանկյունից Ռուսաստանում կանայք գտնվում են դե ֆակտո խտրականության իրավիճակում: Այս առնչությամբ, մասնավորապես նշվում է, որ երկրի կառավարության կողմից կանանց նկատմամբ ապշեցուցիչ մասշտաբների ընտանեկան բռնության լուծման համար համապատասխան օրենսդրություն չընդունելը և քրեական հետապնդումների և դատապարտումների ապահովման

համակարգված խնդիրները նպաստել են շարունակական ընտանեկան բռնության համար բարենպաստ մթնոլորտի ստեղծմանը: Քանի որ պարզվել է, որ գոյություն ունի կառուցվածքային կողմնակալություն, դիմումատուները որևէ անհատական նախապաշարմունք ապացուցելու կարիք չեն ունեցել: Ի վերջո, Կոնվենցիայի **46-րդ հոդվածի** (պարտադիր ուժ և վճիռների կատարում) համաձայն՝ Դատարանը առաջարկեց հրատապ փոփոխություններ կատարել ներպետական օրենսդրության և պրակտիկայի մեջ՝ նմանատիպ խախտումները կանխելու համար:

Ընտանեկան բռնության վերաբերյալ բողոքների հետաքննության արդյունավետությունը

Ե.Մ.–ն ընդդեմ Ռումինիայի (թիվ 43994/05)

30 հոկտեմբերի 2012թ.

Դիմումատուն, մասնավորապես, պնդեց, որ իր մեկուկես տարեկան դստեր ներկայությամբ կատարված ընտանեկան բռնության վերաբերյալ իր քրեական բողոքի հետաքննությունն ապարդյուն է մնացել: Ռումինիայի դատարանները մերժել էին դիմումատուի բողոքները՝ պատճառաբանելով, որ ամուսնու կողմից բռնության ենթարկվելու մասին նրա պնդումները չեն ապացուցվել:

Դատարանն արձանագրեց, որ իր դատավարական շրջանակներում տեղի է ունեցել Կոնվենցիայի **3-րդ հոդվածի** (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում) **խախտում՝** գտնելով, որ հետաքննության անցկացման եղանակը չի ապահովել դիմումատուի համար այդ հոդվածով նախատեսված արդյունավետ պաշտպանությունը: Մասնավորապես նշվեց, որ առաջին բողոքը ներկայացնելիս դիմումատուն իշխանություններից օգնություն և պաշտպանություն էր խնդրել իր և դստեր համար՝ ամուսնու ագրեսիվ վարքագծի դեմ: Չնայած այն հանգամանքին, որ օրենսդրական դաշտը նախատեսում էր իշխանությունների տարբեր մարմինների միջև համագործակցություն և ընտանեկան բռնությունը բացահայտելու և դրա դեմ դեմ գործողությունների իրականացումն ապահովելու արտադատական միջոցներ և, որ բժշկական տեղեկանքը պարունակում էր դիմումատուի պնդումների առերևույթ ապացույցներ, գործի նյութերից չէր երևում, որ այդ ուղղությամբ որևէ քայլ է ձեռնարկվել:

Վալիուլիենեն ընդդեմ Լիտվայի

26 մարտի 2013թ.

Այս գործը վերաբերում էր ընտանեկան բռնության ենթարկված կնոջ բողոքին այն մասին, որ իշխանությունները չեն հետաքննել դաժան վերաբերմունքի մասին իր մեղադրանքները և իր զուգընկերոջը պատասխանատվության չեն ենթարկել:

Դատարանը արձանագրեց Կոնվենցիայի **3-րդ հոդվածի** (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում) **խախտում՝** գտնելով, որ սույն գործում խնդրո առարկա պրակտիկան և քրեաիրավական մեխանիզմների կիրառման եղանակը չեն ապահովել դիմումատուի պատշաճ պաշտպանությունը ընտանեկան բռնության գործողություններից: Մասնավորապես, տեղի են ունեցել քրեական գործի հետաքննության ձգձգումներ, և դատախազը որոշել էր դադարեցնել հետաքննությունը:

Դ.Պ.–ն ընդդեմ Լիտվայի (թիվ 27920/08)

22 հոկտեմբերի 2013թ. (դիմումը ցուցակից հանելու որոշում)

Դիմումատուն ամուսնացել է 1989 թվականին, իսկ 2001 թվականին զույգն ամուսնալուծվել է: Նրանք ունեցել են չորս երեխա (ծնված համապատասխանաբար 1988, 1990, 1992 և 2000 թվականներին): Դիմումատուն, մասնավորապես, բողոքել է, որ իր նախկին ամուսնու նկատմամբ՝ իր և իրենց երեք ավագ երեխաների դիտավորյալ և պարբերական ծեծի առնչությամբ քրեական հետապնդումը ձգձգվել է, և գործը ողջամիտ ժամկետում չի քննվել: Արդյունքում, նրա պնդմամբ, քրեական հետապնդումը դադարեցվել է, և նրա նախկին ամուսինը դատարանի կողմից համապատասխան պատիժ չի ստացել:

Բարեկամական կարգավորման հասնելու փորձերի ձախողումից հետո Լիտվայի կառավարությունը 2012թ. սեպտեմբերին տեղեկացրել է Դատարանին, որ իրենք առաջարկում են միակողմանի հայտարարություն անել՝ նպատակ ունենալով լուծել դիմումում բարձրացված ընտանեկան բռնությունը չկանխելու համար պետության պատասխանատվության հարցը: Դատարանի նախադեպային իրավունքի և սույն

գործի հանգամանքների լույսի ներքո՝ կառավարությունը, մասնավորապես, ընդունեց, որ սույն գործով կիրառված քրեաիրավական մեխանիզմները դատավարության մասով թերի էին, այն աստիճանի, որ խախտվել էին Կոնվենցիայի 3-րդ հոդվածով (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում) պետության կողմից ստանձնած դրական պարտավորությունները: Հաշվի առնելով կառավարության հայտարարության դրույթները և դրանում նշված պարտավորությունների կատարումն ապահովելու պայմանները՝ Դատարանը որոշեց **հանել դիմումը գործերի ցուցակից**՝ համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի (դիմումը ցուցակից հանելը):

Դ.Մ.Դ.–ն ընդդեմ Ռումինիայի (թիվ 23022/13)

3 հոկտեմբերի 2017թ.

Տե՛ս ստորև, «Արդար դատաքննության իրավունք» մասում:

Բուտուրգյանուն ընդդեմ Ռումինիայի

11 փետրվարի 2020թ.

Տե՛ս ստորև, «Անձնական և ընտանեկան կյանքի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք» մասում:

Արտաքսման դեպքում ընտանեկան բռնության ենթարկվելու վտանգը

Ն.–ն ընդդեմ Շվեդիայի (թիվ 23505/09)

20 Հուլիսի 2010

Դիմումատուն, ով Աֆղանստանի քաղաքացի է, Շվեդիա էր ժամանել ամուսնու հետ 2004 թվականին: Ապաստան տրամադրելու նրանց խնդրանքը մի քանի անգամ մերժվել է: 2005 թվականին դիմումատուն բաժանվել է ամուսնուց: 2008 թվականին նրա ամուսնալուծության խնդրանքը մերժվեց շվեդական դատարանների կողմից, քանի որ նրանք իրավասու չէին լուծել ամուսնությունը, քանի դեռ դիմումատուն օրինական կերպով երկրում չէր բնակվում: Նրա ամուսինը դատարանին հայտնել է, որ դեմ է ամուսնալուծությանը: Այդ ընթացքում դիմումատուն ապարդյուն դիմեց Շվեդիայի միգրացիոն վարչությանը իր գործը վերանայելու և արտաքսումը դադարեցնելու խնդրանքով, պնդելով, որ իրեն Աֆղանստանում մահապատիժ է սպառնում, քանի որ դավաճանություն է գործել՝ հարաբերություններ սկսելով շվեդ տղամարդու հետ, և որ ընտանիքը մերժել է իրեն:

Դատարանն արձանագրեց, որ դիմումատուի Շվեդիայից Աֆղանստան արտաքսումը կհամարի Կոնվենցիայի **3-րդ հոդվածի** (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելում) **խախտում** գտնելով, որ սույն գործի հատուկ հանգամանքներում զգալի հիմքեր կան ենթադրելու, որ Աֆղանստան արտաքսվելու դեպքում նա կկանգնի իր ամուսնու, նրա ընտանիքի, իր ընտանիքի և աֆղանական հասարակության կողմից հաշվեհարդարի 3–րդ հոդվածով նախատեսված տարբեր կուտակային վտանգների առջև: Դատարանը, մասնավորապես, նշել է, որ այն փաստը, որ դիմումատուն ցանկանում էր ամուսնալուծվել և չէր ցանկանում այլևս ապրել ամուսնու հետ, կարող է հանգեցնել կյանքին սպառնացող լուրջ հետևանքների: Իրոք, 2009 թվականի ապրիլի «Շիաների անձնական կարգավիճակի մասին» օրենքը պահանջում էր, որ կանայք ենթարկվեն իրենց ամուսինների սեռական պահանջներին և առանց թույլտվության տնից դուրս չգան: Նաև, հաղորդումների համաձայն, աֆղանցի կանանց մոտ 80%-ը ենթարկվեում էր ընտանեկան բռնության, ընդ որում նման գործողությունները իշխանությունները համարում են օրինական և հետևաբար չեն հետապնդում: Ի վերջո, ոստիկանություն կամ դատարան դիմելու համար կինը պետք է հաղթահարեր ընթանիքն առանց տան գլխավորի թույլտվության լքած կանանց նկատմամբ հասարակական անարգանքը: Վիճակագրության և միջազգային զեկույցների մատնանշած ընդհանուր վտանգն անտեսել չէր կարելի:

Արդար դատաքննության իրավունք (Կոնվենցիայի 6-րդ հոդված)

Վասիլևսկան ընդդեմ Լեհաստանի

2 դեկտեմբերի 2014թ. (ընդունելիության մասին որոշում)

1997 թվականին դիմումատուն և նրա ամուսինը ամուսնալուծվել են: Մինչ ամուսնալուծությունը, դիմումատուի նախկին ամուսինը նրան դուրս էր շպրտել էր իրենց բնակարանից: Նա փոխել էր կողպեքները և թույլ չէր տվել դիմումատուին ներս մտնել՝ իրեն, դստերն ու թոռնուհուն պատկանող անձնական իրերը վերցնելու համար: Դիմումատուն բողոքում է, մասնավորապես, իշխանությունների կողմից սեփական դատավճիռները չկատարելու վերաբերյալ, որոնք հրամայել էին վտարել իր նախկին ամուսնուն իր պատկանող բնակարանից: Նա նաև դժգոհում է, որ իր համար անհնար է քրեական հետաքննություն սկսել իր նախկին ամուսնու դեմ, որը զրկել է նրան բնակարանում մնացած իր իրերից և հենց բնակարանում ապրելու հնարավորությունից:

Դատարանը համարել է, որ դիմումատուի բողոքն այն մասին, որ իշխանությունները չեն կատարել բնակարանից իր նախկին ամուսնու վտարման հրամանը, պետք է քննվի Կոնվենցիայի 6-րդ հոդվածով (արդար դատավարության իրավունք):

Գտնելով, որ դիմումատուն չի սպառել այս առնչությամբ ներպետական պաշտպանության միջոցները, դատարանը հայտարարեց այդ բողոքն **անընդունելի**՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի (ընդունելիության չափանիշներ): Դատարանը նաև **անընդունելի** համարեց դիմումի մնացած մասը (ակնհայտորեն անհիմն):

Դ.Մ.Դ.–ն ընդդեմ Ռումինիայի (թիվ 23022/13)

3 հոկտեմբերի 2017թ.

Այս գործը վերաբերում էր դիմումատուի կողմից իր հոր դեմ ընտանեկան բռնության համար հարուցված վարույթին: Վարույթը տևել է ավելի քան ութ տարի և ավարտվել է հոր դատապարտմամբ՝ իր երեխային ֆիզիկական և հոգեկան բռնության ենթարկելու համար: Դիմումատուն բողոքել է, որ այդ վարույթն ապարդյուն է եղել, և որ իրեն վնասի փոխհատուցում չի տրվել: Մասնավորապես, ներպետական դատարանները վերջին ատյանում գտել էին, որ իրենք պարտավոր չեն քննել փոխհատուցման հարցը, քանի որ ոչ նա, ոչ դատախազը ստորադաս ատյաններում նման պահանջ չեն ներկայացրել:

Դատարանն արձանագրեց Կոնվենցիայի **3-րդ հոդվածի** (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում) **խախտում**, քանի որ դաժան վերաբերմունքի վերաբերյալ մեղադրանքների հետաքննությունը շատ երկար է տևել և ուղեկցվել է այլ լուրջ թերություններով: Այս առումով, այն մասնավորապես ընդգծեց, որ Պայմանավորվող պետությունները պետք է ձգտեն պաշտպանել երեխաների արժանապատվությունը, և որ գործնականում դա պահանջում է համապատասխան իրավական դաշտ երեխաներին ընտանեկան բռնությունից պաշտպանելու համար: Այս վճռում Դատարանը նաև արձանագրեց, որ տեղի է ունեցել **Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի** (արդար դատաքննության իրավունք) **խախտում**, քանի որ ներպետական դատարանները չեն քննել դիմումատուի բողոքի էությունը նրան փոխհատուցում չտրամադրելու վերաբերյալ, մինչդեռ ներպետական օրենսդրության մեջ հստակ ամրագրված է, որ նրանք պարտավոր էին որոշում կայացնել անչափահասին վերաբերող գործով փոխհատուցման վերաբերյալ, նույնիսկ առանց տուժողի պաշտոնական պահանջի:

Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք (Կոնվենցիայի 8–րդ հոդված)

Պետության պարտականությունը՝ պաշտպանելու անհատների ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը

Բեվակուան և Ս.–ն. ընդդեմ Բուլգարիայի

12 հունիսի 2008թ.

Առաջին դիմումատուն, ով պնդում էր, որ իրեն պարբերաբար ծեծի է ենթարկել իր ամուսինը, լքել է նրան՝ իր հետ տանելով իրենց երեք տարեկան որդուն (երկրորդ դիմումատուին) և ամուսնալուծության հայց է ներկայացրել: Սակայն նա պնդել է, որ ամուսինը շարունակել է ծեծել իրեն: Նա իր որդու հետ չորս օր անցկացրել է բռնության ենթարկված կանանց ապաստարանում, սակայն, նրան ենթադրաբար զգուշացրել

են, որ տղային առևանգելու համար կարող է հետապնդվել իրավապահ մարմինների կողմից: Այնուհետև դատարանը կայացրել է երեխայի նկատմամբ ծնողների ընդհանուր խնամակալություն մասին որոշմանը, որը, ըստ նրա, չի կատարել: Ամուսնու դեմ բռնության մեղադրանք առաջադրելը ենթադրաբար հետագա բռնություն է հրահրել: Իր կողմից երեխայի ժամանակավոր խնամակալություն սահմանելու վերաբերյալ դիմումները չեն դիտարկվել որպես առաջնահերթություն, և խնամակալության թույլտվությունը նա ստացել է ավելի քան մեկ տարի անց, միայն այն բանից հետո, երբ նրա ամուսնալուծությունը պաշտոնապես հաստատվել է: Հաջորդ տարի նա կրկին ծեծի է ենթարկվել իր նախկին ամուսնու կողմից, ընդ որում քրեական հետապնդման վերաբերյալ նրա դիմումները մերժվել են՝ այն պատճառաբանությամբ, որ դա «մասնավոր գործ» է և մասնավոր հետապնդում է պահանջում:

Դատարանն արձանագրեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի **8-րդ հոդվածի** (ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) **խախտում՝** հաշվի առնելով ներպետական դատարանների կողմից ժամանակավոր խափանման միջոցը անհապաղ չընդունելու կուտակային հետևանքները մի իրավիճակում, որը բացասաբար է ազդել դիմումատուների և, առաջին հերթին, երկրորդ դիմումատուի բարեկեցության վրա, ինչպես նաև հաշվի առնելով նույն ժամանակահատվածում իշխանությունների կողմից առաջին դիմումատուի նախկին ամուսնու պահվածքի առնչությամբ բավարար միջոցներ չձեռնարկելը: Դատարանի կարծիքով, դա հավասարազոր էր դիմումատուներին օգնելու ձախողմանը, հակառակ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված՝ նրանց անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքն ապահովելու պետության դրական պարտավորություններին: Դատարանը, մասնավորապես, ընդգծել է, որ վեճը «մասնավոր հարց» համարելը անհամատեղելի է դիմումատուների ընտանեկան կյանքը պաշտպանելու իշխանությունների պարտավորության հետ:

Ե.Ա.–ն և այլք ընդդեմ Սլովակիայի (թիվ 8227/04)

15 սեպտեմբերի 2009թ.

Տե՛ս վերևում, «Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելում» մասում:

Ա.–ն ընդդեմ Խորվաթիայի (թիվ 55164/08)

14 հոկտեմբերի 2010թ.

Դիմումատուի այժմ նախկին ամուսինը (տառապում է հետտրավմատիկ սթրեսային խանգարումով, պարանոյայով, տագնապի զգացմունքով և էպիլեպսիայով) երկար տարիներ շարունակ նրան ենթարկել է ֆիզիկական բռնության՝ պատճառելով մարմնական վնասվածքներ և սպառնալով սպանել նրան, ինչպես նաև պարբերաբար բռնության է ենթարկել կնոջն իրենց փոքր դստեր աչքի առաջ: Թաքնվելուց հետո դիմումատուն դիմել է դատարան, պահանջելով կայացնել որոշում, որը կարգելի նախկին ամուսնուն հետապնդել իրեն: Այդ հայցը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ դիմումատուի ցուցմունքներից չի հետևում, որ իր կյանքին անմիջական վտանգ է սպառնում:

Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի **8-րդ հոդվածի** (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) **խախտում** այն առումով, որ Խորվաթիայի իշխանությունները չեն կատարել դատարանների կողմից սահմանված բազմաթիվ միջոցները՝ դիմումատուին պաշտպանելու կամ նրա նախկին ամուսնու հոգեբուժական խնդիրներով զբաղվելու, որոնք, ըստ երևույթին, եղել են նրա բռնի պահվածքի հիմքում: Պարզ չէր նաև, թե արդյոք նա հոգեբուժական բուժում է ստացել: Դատարանը նաև անընդունելի է ճանաչել **դիմումատուի բողոքը Կոնվենցիայի 14-րդ հոդվածի** (խտրականության արգելում) **հիման վրա**, այն հիմքով, մասնավորապես, որ նա չի ներկայացրել բավարար ապացույցներ (օրինակ՝ հաշվետվություններ կամ վիճակագրական տվյալներ)՝ ցույց տալու, որ Խորվաթիայում ընտանեկան բռնության դեմ ընդունված միջոցները կամ գործելակերպը կամ նման միջոցների կամ գործելակերպի հետևանքները խտրական են:

Տե՛ս նաև՝ **Շ.Բ.–ն ընդդեմ Խորվաթիայի (թիվ 47666/13)**, 2017թ. հուլիսի 11–ի վճիռը.

Հաջորդովան ընդդեմ Սլովակիայի

30 նոյեմբերի 2010թ.

Դիմումատուն, մասնավորապես, բողոքել է, որ պետական իշխանությունները չեն կատարել իրենց օրենքով սահմանված պարտավորությունը՝ իր նախկին ամուսնուն չեն տեղափոխել հոգեբուժական հաստատություն նրա նկատմամբ բռնություն գործադրելու և սպառնալու համար քրեական դատավճիռ կայացնելուց հետո:
Դատարանն արձանագրեց, որ դիմումատուի նախկին ամուսնու վարքագծի նկատմամբ անհրաժեշտ միջոցներ չկիրառելը, և, մասնավորապես, ներպետական դատարանների կողմից դատապարտումից հետո նրան հոգեբուժական նպատակով չկալանավորելը, հավասարազոր է եղել Կոնվենցիայի **8-րդ հոդվածով նախատեսված պետության դրական պարտավորությունների խախտմանը** (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք): Դատարանը, մասնավորապես, նշել է, որ, թեև իր նախկին ամուսնու բազմիցս սպառնալիքները երբեք չեն իրականացել, դրանք բավարար են եղել դիմողի հոգեբանական ամբողջականության և բարեկեցության վրա ազդելու համար՝ որպեսզի ծագեն 8-րդ հոդվածով նախատեսված պետության դրական պարտավորությունները:

Կայուցան ընդդեմ Հունգարիայի

24 ապրիլի 2012թ.
Բնակարանի սեփականության վերաբերյալ բազմաթիվ քաղաքացիական վեճերի ընթացքում դիմումատուն ստիպված կիսել է բնակարանը իր նկատմամբ դաժան վարքագիծ դրսևորող քաղաքացիական ամուսնու հետ: Նա մասնավորապես պնդեց, որ Հունգարիայի իշխանությունները չեն կարողացել պաշտպանել իրեն մշտական ֆիզիկական և հոգեբանական բռնությունից, որը տեղի էր ունենում իր տանը:
Դատարանն եզրակացրեց, որ Հունգարիայի իշխանությունները չեն կատարել իրենց դրական պարտավորությունները՝ **խախտելով Կոնվենցիայի 8-րդ հոդվածը** (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք): Այն մասնավորապես պարզեց, որ, թեև դիմումատուն դատարան բողոք է ներկայացրել իր զուգընկերոջ դեմ՝ հարձակման համար, բազմիցս խնդրել է նրա նկատմամբ խափանման միջոց կիրառել և քաղաքացիական դատավարություն է հարուցել նրան բնակարանից վտարելու համար, իշխանություններն նրա արդյունավետ պաշտպանության համար բավարար միջոցներ չեն ձեռնարկել:

Կովալն ընդդեմ Լեհաստանի

18 սեպտեմբերի 2012թ. (ընդունելիության մասին որոշում)
Դիմումատուն բողոքել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) համաձայն, որ Լեհաստանը չի կատարել իր դրական պարտավորությունը՝ պաշտպանելու իրեն, իր կրտսեր եղբորը և նրանց մորը ընտանեկան բռնությունից, չձեռնարկելով որևէ քայլ՝ կիրարկելու դատական վճիռը, որով հորը հանձնարարվել է լքել ընտանեկան բնակարանը: Դիմումատուն նաև պնդեց, որ արդյունքում ինքը և իր ընտանիքը ենթարկվել են հոր դաժան վերաբերմունքին, չնայած դատարանը հրամայել էր նրան հեռանալ բնակարանից:
Դատարանը հայցն **անընդունելի է** ճանաչել (ակնհայտորեն անհիմն)՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի (ընդունելիության չափանիշներ): Հաշվի առնելով գործի հանգամանքները, որպես ամբողջություն՝ այն համարեց, որ չի կարելի ասել, որ իշխանությունների արձագանքը դիմումատուի հոր վարքագծին ակնհայտորեն ոչ համարժեք է եղել՝ կապված խնդրո առարկա հանցագործությունների ծանրության հետ:
Չի կարելի նաև ասել, որ գործով կայացված որոշումները հանցագործի վարքագծի վրա կաշկանդող կամ կանխարգելիչ ազդեցություն ունենալ չէին կարող: Նմանապես, Դատարանը չի եզրակացրել, որ իշխանությունները չեն դիտարկել դիմումատուի իրավիճակը և նրա հոր կողմից հարուցված ընտանեկան բռնությունը որպես ամբողջություն և համարժեք չեն արձագանքել իրավիճակին ամբողջությամբ, օրինակ՝ վարելով բազմաթիվ վարույթներ՝ կապված ընտանեկան բռնության առանձին դեպքերի հետ:

Այրին Ուիլսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության

23 հոկտեմբերի 2012թ. (ընդունելիության մասին որոշում)
Այս գործը վերաբերում էր ընտանեկան բռնության տուժողի բողոքին՝ իրեն մարմնական ծանր վնաս պատճառելու համար ամուսնու նկատմամբ հարուցված քրեական գործն իշխանությունների կողմից անբավարար վարելու և նրա նկատմամբ կիրառված պայմանական պատիժը չափազանց մեղմ լինելու վերաբերյալ:
Դատարանը հայցը համարեց **անընդունելի** (ակնհայտորեն անհիմն)՝ գտնելով, որ

Հյուսիսային Իռլանդիայի իշխանությունները **չեն խախտել Կոնվենցիայի 8-րդ հոդվածով** նախատեսված (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) դիմումատուի իրավունքները պաշտպանելու իրենց պարտականությունը: Դատարանը մասնավորապես, նշեց, որ դիմումատուն միայն մեկ բողոք է ներկայացրել իշխանություններին, այդ միջադեպն այնուհետ անմիջապես հետաքննվել է, նրա ամուսինը ձերբակալվել և նրան մեղադրանք է առաջադրվել, իսկ դրան հաջորդած քրեական վարույթն իրականացվել է պատշաճ արագությամբ: Դիմումատուն Դատարանին բռնության վերաբերյալ որևէ այլ բողոք չէր ներկայացրել:

Երեմիան և այլք ընդդեմ Մոլդովայի Հանրապետության

28 մայիսի 2013թ.

Տե՛ս ստորև, «Խտրականության արգելում» մասում:

Օ.Կ.Ի.–ն և այլք ընդդեմ Ռումինիայի (թիվ 49450/17)

21 մայիսի 2019թ. (Հանձնաժողովի վճիռը)

2015 թվականին Ռումինիայում ամառային արձակուրդներն անցկացնելուց հետո առաջին դիմումատուն՝ ազգությամբ ռումինացի, որոշել էր իրենց երկու երեխաների հետ չվերադառնալ ամուսնու մոտ՝ Իտալիա: Դատարանի առջև առաջին դիմումատուն և նրա երեխաները բողոքարկեցին երեխաներին Իտալիա վերադարձնելու որոշումը: Նրանք, մասնավորապես, պնդեցին, որ ռումինական դատարանները հաշվի չեն առել հոր կողմից իրենց նկատմամբ դաժան վերաբերմունքի լուրջ վտանգը, որը 1980 թվականի հոկտեմբերի 25-ի Հաագայի կոնվենցիայով «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» բացառություններից մեկն էր այն սկզբունքից, որ երեխաները պետք է վերադարձվեն իրենց սովորական բնակության վայր:

Դատարանարձանագրեց Կոնվենցիայի **8-րդ հոդվածի** (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) **խախտում՝** գտնելով, որ Իտալիայում իրենց հոր մոտ վերադառնալու որոշում կայացնելիս ռումինական դատարանները բավարար ուշադրություն չեն դարձրել դիմումատու երեխաների՝ ընտանեկան բռնության ենթարկվելու լուրջ վտանգին, որը բացառություններից մեկն էր միջազգային իրավունքի այն սկզբունքից, որ երեխաները պետք է վերադարձվեն իրենց սովորական բնակության վայր: Դատարանը մասնավորապես նշեց, որ եթե անգամ երեխաների պաշտպանության ռումինական և տալական մարմինների միջև առկա էր փոխադարձ վստահություն՝ համաձայն ԵՄ օրենսդրության, դա չի նշանակում, որ Ռումինիան պարտավոր էր երեխաներին հետ ուղարկել այնպիսի միջավայր, որտեղ նրանք վտանգի տակ են, Իտալիային վերապահելով որևէ դաժան վերաբերմունքի միջադեպով զբաղվելու իրավունքը, այն կրկնվելու պարագայում:

Լևչունն ընդդեմ Ուկրաինայի

3 սեպտեմբերի 2020թ.

Այս գործը վերաբերում էր դիմումատուի բողոքին, որ իր նախկին ամուսնու դեմ վտարման հայցը մերժելու պատճառով նա և իր երեխաներին ենթարկել են ընտանեկան բռնության և ոտնձգությունների վտանգի: Նա պնդեց, որ ներպետական դատարանները չափազանց ձևական մոտեցում են դրսևորել իրենց որոշումներում և իր նախկին ամուսնուն սերմանել են անպատժելիության զգացում, ինչը նրան և իր երեխաներին կանգնեցրել է հոգեբանական և ֆիզիկական բռնությունների ավելի մեծ վտանգի առաջ:

Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի **8-րդ հոդվածի** (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) **խախտում,** գտնելով, որ քաղաքացիական դատարանների պատասխանը դիմումատուի՝ իր նախկին ամուսնու նկատմամբ վտարման հայցի վերաբերյալ, չի համապատասխանել ընտանեկան բռնությունից դիմումատուի արդյունավետ պաշտպանությունը ապահովելու Պետության դրական պարտավորությանը: Դատարանը, մասնավորապես, համարել է, որ ներպետական դատական իշխանությունները չեն իրականացրել դիմումատուին և նրա երեխաներին հետագայում սպառնացող հոգեբանական և ֆիզիկական բռնության վտանգի համապարփակ վերլուծություն: Ավելին, դատավարությունը տևել է ավելի քան երկու տարի՝ իրավասության երեք մակարդակներում, որի ընթացքում դիմումատուն և նրա երեխաները գտնվել են հետագա բռնության վտանգի տակ: Հետևաբար, խնդրո առարկա բոլոր մասնավոր շահերի միջև արդար հավասարակշռություն չի ապահովվել:

Դաժան պայմաններում գտնվող երեխայի տեղավորում

Ի.Ց.–ն ընդդեմ Միացյալ Թագավորության (թիվ 4547/10)

13 մարտի 2012թ.

Դիմումատուն և նրա մի քանի տարվա զուգընկերը 2001թ. որդի են ունեցել: 2003 թվականին, ծնողների միջև «ալկոհոլի ազդեցությամբ պայմանավորված» միջադեպի հետևանքով, ընտանիքը հայտնվել է սոցիալական ծառայությունների ուշադրության կենտրոնում: Բռնության և ալկոհոլի չարաշահման դեպքերը 2007 թվականի վերջից ավելի հաճախ են դարձել և ոստիկանությունը բազմիցս այցելել է նրանց տունը: 2008թ. հունիսին, երբ ծնողների միջև հերթական դաժան վեճի ժամանակ տղան մարմնական վնասվածք է ստացել, տեղական մարմինները ընդունել են անհետաձգելի միջամտության որոշում: Երեխայի խնամքի հետ կապված վարույթը հանգեցրեց երեխային որդեգրման իրավունք տալու որոշման: Դիմումատուն բողոքել է, որ դատարանների կողմից իրեն որպես իր որդու միակ խնամող հաստատելու մերժումը և տեղափոխման որոշում կազմելիս բոլոր համապատասխան նկատառումները հաշվի չառնելը խախտել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք):

Դատարանը **չի արձանագրել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի** (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) **խախտում՝** գտնելով, որ տեղափոխման մասին որոշման պատճառները եղել են տեղին և բավարար, դիմումատուն ունեցել է իր գործը ներկայացնելու բոլոր հնարավորությունները և լիովին ներգրավված է եղել որոշումների կայացման գործընթացում: Դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ հաշվի առնելով գործի պատմությունը և հաղորդումները, շրջանային դատարանի դատավորի այն տեսակետը, որ դիմումատուի հարաբերությունների վերականգնումը հոր հետ հավանական է և վտանգ է ներկայացնում երեխայի բարեկեցության համար, անհիմն չէր թվում: Հետևաբար, թեև հնարավորության դեպքում երեխայի ընտանեկան կապերը պահպանելը բխում էր նրա շահերից, պարզ էր, որ տվյալ դեպքում առաջնահերթությունը տրվել էր երեխայի զարգացումն ապահով և անվտանգ միջավայրում պահպանելու նկատառումներին: Այս առնչությամբ Դատարանը, մասնավորապես, նկատել է, ալկոհոլի չարաշահումը դադարեցման և ծնողական աջակցության հնարավորությունների ստեղծման միջոցով փորձեր են արվել վերականգնել ընտանիքը: Երբ դիմումատուն նշել է, որ ինքը բաժանվել է երեխայի հորից, նրան լրացուցիչ տեղեկություններ են տրվել ընտանեկան բռնության աջակցության մասին, որից նա կարող էր օգտվել: Պարզվել է, սակայն, որ նա նման աջակցություն ստանալու համար չի դիմել և ի վերջո հաշտվել է երեխայի հոր հետ:

Նամակագրության գաղտնիություն և կիբերբուլինգ

Բուտուրուգան ընդդեմ Ռումինիայի

11 փետրվարի 2020թ.

Այս գործը վերաբերում էր նախկին ամուսնու կողմից ընտանեկան բռնության և էլեկտրոնային նամակագրության գաղտնիության խախտման մասին դիմումատուի պնդումներին, ով բողոքում էր նման տեսակի բռնության ենթարկված անձանց պաշտպանության համակարգի թերություններից: Դիմումատուն բողոքել է, մասնավորապես, ընտանեկան բռնության քրեական հետաքննության անարդյունավետության վերաբերյալ, որի պատճառով իր պնդմամբ, նա տուժել է: Նա նաև բողոքել է, որ իր անձնական անվտանգությունը պատշաճ կերպով չի ապահովվել, և քննադատել է իշխանությունների՝ նախկին ամուսնու կողմից իր նամակագրության գաղտնիությունը խախտելու վերաբերյալ բողոքն անտեսելու փաստը:

Դատարանը արձանագրել է Կոնվենցիայի **3-րդ հոդվածի** (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի) և **8-րդ հոդվածի** (անձնական կյանքի և նամակագրության հարգման իրավունք) **խախտում՝** պետության կողմից այդ հոդվածներով իր դրական պարտավորությունները չկատարելու պատճառով: Դատարանը մասնավորապես գտել է, որ ազգային իշխանությունները ընտանեկան բռնության կոնկրետ խնդրի պարագայում քրեական հետաքննություն չէին անցկացրել, ուստի չէին կարողացել համարժեք արձագանք տալ դիմումատուի կողմից բողոքարկված լուրջ փաստերին: Բռնության ակտերի հետաքննությունը թերի է եղել, և բռնության մասին բողոքի հետ սերտորեն կապված նամակագրության

գաղտնիության խախտման վերաբերյալ բողոքի էությունը չի քննարկվել: Այդ առիթով Դատարանն ի վերջո մատնանշեց, որ կիբերբուլինգը ներկայումս ճանաչվում է որպես կանանց և աղջիկների նկատմամբ բռնության ակնհայտ դրսևորման մոտեցում, և որ այն կարող է ունենալ տարբեր ձևեր, այդ թվում՝ գաղտնիության կիբեր խախտում, տուժողի համակարգիչ ներխուժում, տվյալների ու պատկերների, այդ թվում՝ անձնական տվյալների հավաքում, փոխանակում և շահարկում:

Վոլոդինան ընդդեմ Ռուսաստանի (թիվ 2)

14 սեպտեմբերի 2021թ.

Այս գործը վերաբերում էր դիմումատուի պնդմանը, որ Ռուսաստանի իշխանությունները չեն կարողացել պաշտպանել նրան կիբերոտնձգությունների կրկնվող գործողություններից: Նա մասնավորապես նշել էր, որ իր նախկին զուգընկերը օգտագործել է իր անունը, անձնական տվյալները և ինտիմ լուսանկարները սոցիալական ցանցերում կեղծ պրոֆիլներ ստեղծելու համար, որ նա իր ձեռքի պայուսակում տեղադրել է GPS-թրեքեր, նաև սոցցանցերի միջոցով իրեն մահվան սպառնալիքներ է ուղարկել, և որ իշխանությունները արդյունավետորեն չեն հետաքննել այս մեղադրանքները: Դատարանն արձանագրեց Կոնվենցիայի **8-րդ հոդվածի** (անձնական կյանքի հարգման իրավունք) **խախտում՝** գտնելով, որ Ռուսաստանի իշխանությունները չեն կատարել այդ հոդվածով նախատեսված իրենց պարտավորությունները՝ պաշտպանելու դիմումատուին դաժան վերաբերմունքից: Մասնավորապես, նշվում է, որ չնայած դիմումատուի զուգընկերոջը հետապնդելու համար առկա իրավական գործիքներին, իշխանությունները չեն իրականացրել արդյունավետ հետաքննություն և որևէ պահի չեն դիտարկել, թե ինչ կարող էր և պետք է արվեր դիմումատուին կրկնվող առցանց ոտնձգություններից պաշտպանելու համար: Դատարանը նաև նշել է, որ այդ եզրակացությունները համընկնում են նույն դիմումատուի՝ Վոլոդինա ընդդեմ Ռուսաստանի վերաբերյալ նախկին դատավճռի արդյունքների հետ (տես ստորև՝ «Խտրականության արգելում» մասում), որտեղ Դատարանը գտնում է, որ Ռուսաստանի իշխանությունների արձագանքը ներպետական կրկնվող գործողություններին ակնհայտորեն անբավարար էր:

Սեփականության պաշտպանություն (Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված)

Ջ.Դ.–ն և Ա.–ն ընդդեմ Միացյալ Թագավորության (թիվ 32949/17 և թիվ 34614/17)

24 հոկտեմբերի 2019թ.

Տես ստորև՝ «Խտրականության արգելում» մասում:

Խտրականության արգելում (Կոնվենցիայի 14-րդ հոդված)

Օփուզն ընդդեմ Թուրքիայի

9 հունիսի 2009թ.

Դիմումատուն և նրա մայրը երկար տարիներ հարձակման և սպառնալիքների են ենթարկվել դիմումատուի ամուսնու կողմից, ինչի հետևանքով երկու կանայք էլ տարբեր պահերի կյանքին սպառնացող վնասվածքներ են ստացել: Միայն մեկ բացառությամբ, նրա դեմ քրեական հետապնդում չի հարուցվել, այն հիմնավորմամբ, որ երկու կանայք էլ հետ են վերցրել իրենց բողոքները, չնայած նրանց բացատրություններին, որ ամուսինը բռնություն է կիրառել նրանց նկատմամբ՝ սպանելու սպառնալիքով: Հետագայում նա դանակի յոթ հարված է հասցրել կնոջը և տուգանվել մոտ 385 եվրոյին համարժեք, որը պետք է վճարվեր մաս–մաս: Երկու կանայք բազմաթիվ բողոքներ են ներկայացրել՝ պնդելով, որ իրենց կյանքին վտանգ է սպառնում: Ամուսնուն հարցաքննել են և բաց թողել: Ի վերջո, երբ կանայք փորձում էին հեռանալ, ամուսինը ատրճանակից սպանել էր սկեսուրին՝ այ պատրվակով, որ նա իր պատվի հետ է խաղում: Նա մեղավոր էր ճանաչվել սպանության համար և դատապարտվել ցմահ ազատազրկման, սակայն ազատ էր արձակվել մինչև իր գանգատի դիտարկումը, ինչից հետո նրա կնոջ պնդմամբ, շարունակել էր սպառնալ իրեն:

Դատարանը արձանագրել է Կոնվենցիայի **2-րդ հոդվածի** (կյանքի իրավունք) **խախտում՝** կապված դիմումատուի մոր սպանության հետ, և Կոնվենցիայի **3-րդ**

հոդվածի (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում) **խախտում՝** պետության կողմից դիմումատուին չպաշտպանելու պատճառով: Դատարանը գտել է, որ Թուրքիան չի կարողացել ստեղծել և կիրառել ընտանեկան բռնությունը պատժելու և տուժողների պաշտպանության համակարգ: Իշխանությունները նույնիսկ չեն կիրառել առկա պաշտպանական միջոցները և դադարեցրել են վարույթը, որչակավորելով այն որպես «ընտանեկան խնդիր», անտեսելով, թե ինչու են բողոքները դիմումատուների կողմից հետ կանչվել: Գոյություն պետք է ունենար իրավական դաշտ, որը թույլ կտար քրեական գործ հարուցել՝ անկախ նրանից, թե բողոքները հետ են կանչվել թե ոչ:
Դատարանը նաև վճռել է, առաջին անգամ ընտանեկան բռնության գործով, որ տեղի է ունեցել **2-րդ և 3-րդ հոդվածներով զուգորդված** Կոնվենցիայի **14-րդ հոդվածի** (խտրականության արգելում) **խախտում,** նշելով, որ ընտանեկան բռնությունը հիմնականում ազդում է կանանց վրա, ընդգ որում Թուրքիայում ընդհանուր և խտրական դատական պասիվությունը ստեղծել է դրա համար բարենպաստ մթնոլորտ: Հետևաբար, դիմումատուի և նրա մոր կողմից կրած բռնությունը կարող է համարվել որպես գենդերային հիմքով և կանանց նկատմամբ խտրական վերաբերմունք: Չնայած վերջին տարիներին թուրքական կառավարության կողմից իրականացված բարեփոխումներին, դատական համակարգի ընդհանուր անպատասխանատվությունը և ագրեսորների անպատժելիությունը, ինչպես դիմումատուի դեպքում, վկայում են իշխանությունների՝ ընտանեկան բռնության դեմ համապատասխան քայլեր ձեռնարկելու անբավարար հանձնառության մասին:

Ա.–ն ընդդեմ Խորվաթիայի (թիվ 55164/08)

14 հոկտեմբերի 2010թ.

Տե՛ս վերևում, «Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք» մասում:

Երեմիան և այլք ընդդեմ Մոլդովայի Հանրապետության

28 մայիսի 2013թ.

Առաջին դիմումատուն և նրա երկու դուստրերը բողոքել են Մոլդովայի իշխանությունների կողմից իրենց ամուսնու և հոր՝ ոստիկանության ծառայողի, բռնի և վիրավորական պահվածքից իրենց չպաշտպանելու մասին:
Դատարանն արձանագրեց Կոնվենցիայի **3-րդ հոդվածի** (անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում) **խախտում** առաջին դիմումատուի նկատմամբ, քանի որ, չնայած բռնության մասին իրենց իմացությանը, իշխանությունները չեն կարողացել արդյունավետ միջոցներ ձեռնարկել նրա ամուսնու նկատմամբ և պաշտպանել նրան հետագա ընտանեկան բռնությունից: Դատարանը նաև արձանագրեց Կոնվենցիայի **8-րդ հոդվածի** (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) **խախտում** դուստրերի նկատմամբ՝ հաշվի առնելով, որ չնայած այն վնասակար հոգեբանական հետևանքներին, որ առաջացել են նրանց մոտ, երբ նրանք ականատես են եղել իրենց մոր նկատմամբ իրենց հոր բռնությանը ընտանեկան օջախում, նման վարքագծի կրկնությունը կանխելու համար քիչ կամ ոչ մի քայլ չէր ձեռնարկվել: Ի վերջո, Դատարանն արձանագրեց առաջին դիմումատուի նկատմամբ Կոնվենցիայի **3-րդ հոդվածով զուգորդված 14-րդ հոդվածի** (խտրականության արգելք) **խախտում**, գտնելով, ընդամենը ձախողում կամ ձգձգում չէին նրա նկատմամբ բռնության դեմ պայքարում, այլ հավասարվում էին նման բռնության նկատմամբ բազմիցս կրկնվող ներողամտության և արտացոլում էին խտրական վերաբերմունք առաջին դիմումատուի՝ որպես կնոջ նկատմամբ: Այս առումով Դատարանը նկատեց, որ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի՝ կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների վերաբերյալ եզրակացությունները միայն հաստատեցին այն տպավորությունը, որ իշխանությունները լիովին չեն գնահատում ընտանեկան բռնության խնդրի լրջությունն ու չափը Մոլդովայի Հանրապետությունում և դրա խտրական ազդեցությունը կանանց վրա:

Տե՛ս նաև՝ **Բ.–ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (թիվ 61382/09)** և **Մուդրիչն–ն ընդդեմ Բ.–ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության,** 2013թ. հուլիսի 16–ի վճիռները, **Ն.Ա.–ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (թիվ 13424/06)**, 2013թ. սեպտեմբերի 24–ի վճիռը, **Տ.Մ.–ն և Կ.Մ.–ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության**, 2014թ. հունվարի 24–ի վճիռը, **Մունտյանուն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության**, 2020թ. մայիսի 26–ի վճիռը:

Ռումորն ընդդեմ Իտալիայի

27 մայիսի 2014թ.

Դիմումատուն բողոքել է, որ իշխանությունները չեն աջակցել իրեն 2008 թվականի նոյեմբերին իր նկատմամբ ընտանեկան բռնության լուրջ միջադեպից հետո կամ պաշտպանել իրեն հետագա բռնությունից: Նա, մասնավորապես, պնդել է, որ իր նախկին զուգընկերոջը չեն հարկադրել հոգեբանական բուժում անցնել և նա շարունակում է սպառնալիք ներկայացնել ինչպես իր, այնպես էլ իր երեխաների համար: Նա նաև պնդել է, որ իր զուգընկերոջ տնային կալանքի համար ընտրված կենտրոնը, որը գտնվում էր իր տնից ընդամենը 15 կմ հեռավորության վրա, չի համապատասխանել այդ նպատակին և, որ կենտրոնի աշխատակիցները իրեն երկու անգամ ահաբեկել են, ինչը խախտում է դատարանի որոշումը, որն արգելում է շփումը իր նախկին զուգընկերոջ հետ: Ի վերջո, նա պնդեց, որ այս թերացումները եղել են ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտում Իտալիայի օրենսդրական դաշտի անբավարարության հետևանք, և որ դա խտրականություն է իր, որպես կնոջ, նկատմամբ:

Դատարանը **չարձանագրեց 3-րդ հոդվածի** (անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում) **խախտում՝** առանձին և Կոնվենցիայի **14-րդ հոդվածով զուգորդված** (խտրականության արգելում): Դատարանը գտով, որ Իտալիայի իշխանությունները ստեղծել են օրենսդրական դաշտ, որը թույլ է տալիս միջոցներ ձեռնարկել ընտանեկան բռնության մեջ մեղադրվող անձանց նկատմամբ, և որ այդ դաշտն արդյունավետ է եղել հանցագործության հեղինակին պատժելու համար, որի տուժողն է եղել դիմումատուն և կանխել նրա ֆիզիկական անձեռնմխելիության դեմ բռնի հարձակումների կրկնությունը:

Մ.Գ.–ն ընդդեմ Թուրքիայի (թիվ 646/10)

22 մարտի 2016թ.

Այս գործը վերաբերում էր դիմումատուի կողմից ամուսնության ընթացքում ապրած ընտանեկան բռնությանը, ամուսնալուծությունից հետո նրա հասցեին հնչեցված սպառնալիքներին և հետագա վարույթին: Մասնավորապես, դիմումատուն քննադատել է ներպետական իշխանություններին այն բանի համար, որ նրանք չկարողացան կանխել բռնությունը, որին նա ենթարկվել էր: Նա նաև բողոքել էր Թուրքիայում կանանց նկատմամբ բռնության հետ կապված մշտական և համակարգված խտրականության վերաբերյալ:

Դատարանն արձանագրեց Կոնվենցիայի **3-րդ հոդվածի** (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում) **խախտում՝** գտնելով, որ այն ձևը, որով թուրքական իշխանությունները վարել են քրեական վարույթը, չի կարող համարվել 3-րդ հոդվածի պահանջներին բավարարող: Դատարանը մասնավորապես նշել է, որ իշխանությունները պասիվ վերաբերմունք են ցուցաբերել, քանի որ քրեական գործը սկսվել է ավելի քան հինգ տարի և վեց ամիս անց այն բանից հետո, երբ դիմումատուն բողոք է ներկայացրել իր ամուսնու դեմ, և որ դատավարությունը, առերևույթ, դեռ ընթացքի մեջ է: Այս գործով Դատարանը նաև արձանագրեց Կոնվենցիայի **3-րդ հոդվածով զուգորդված 14-րդ հոդվածի** (խտրականության արգելում) **խախտում՝** գտնելով, որ ամուսնալուծության կայացումից հետո (2007թ. սեպտեմբերի 24-ին), և մինչև 2012թ. մարտի 20–ին նոր օրենքի (թիվ 6284) ուժի մեջ մտնելը, գործող օրենսդրական դաշտը չի երաշխավորել, որ դիմումատուն՝ ամուսնալուծված լինելով, կարող էր օգտվել պաշտպանության միջոցներից, նշելով, որ ներպետական դատարաններ դիմելուց հետո երկար տարիներ նա ստիպված է եղել ապրել վախենալով նախկին ամուսնու վարքագծից:

Յաիմե Կիւիչն ընդդեմ Թուրքիայի

28 հունիսի 2016թ.

Այս գործը վերաբերում էր դիմումատուի դստեր մահվանը, ում սպանել էր ամուսինը՝ թեև մինչ այդ նա չորս բողոք էր ներկայացրել և երեք պաշտպանական և դատական արգելանքի որոշում էր ստացել:

Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի **2-րդ հոդվածի** (կյանքի իրավունք) և **2-րդ հոդվածով զուգորդված 14-րդ հոդվածի** (խտրականության արգելում) **խախտում**: Այն, մասնավորապես, պարզել է, որ ներպետական վարույթը չի բավարարել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջները՝ չապահովելով դիմումատուի դստեր համար պաշտպանություն: Չպատժելով վերջինիս ամուսնուն՝ նրա դեմ արձակված որոշումները չկատարելու համար, ազգային իշխանությունները զրկել էին այդ որոշումները որևէ արդյունավետությունից՝ այդպիսով ստեղծելով անպատժելիության մթնոլորտ, որը նրան հնարավորություն էր տվել առանց

պատասխանատվության ենթարկվելու բազմիցս հարձակվել կնոջ վրա: Դատարանը նաև անընդունելի է համարել, որ դիմումատուի դուստրը մնացել է առանց միջոցների և առանց պաշտպանության՝ ամուսնու բռնի վարքագծին բախվելիս և,որ աչք փակելով տուժողի նկատմամբ կրկնվող բռնությունների և մահվան սպառնալիքների վրա՝ իշխանությունները ստեղծել են այնպիսի մթնոլորտ, որը նպաստավոր է ընտանեկան բռնության համար:

Տալիսն ընդդեմ Իտալիայի

2 մարտի 2017թ.

Տե՛ս վերևում, «Կյանքի իրավունք» մասում:

Բյալան ընդդեմ Ռումինիայի

23 մայիսի 2017թ.

Դիմումատուն պնդեց, որ իշխանությունները չեն կարողացել պաշտպանել իրեն ընտանեկան կրկնվող բռնություններից և պատասխանատվության ենթարկել ամուսնուն՝ չնայած նրա բազմաթիվ բողոքներին: Նա նաև պնդեց, որ իշխանությունների հանդուրժողականությունը նման բռնության ակտերի նկատմամբ ստիպել է իրեն նվաստացած և անօգնական զգալ:

Դատարանն արձանագրեց Կոնվենցիայի **3-րդ հոդվածի** (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում) **խախտում՝** իշխանությունների՝ դիմումատուին ամուսնու բռնությունից համարժեք պաշտպանելու ձախողման պատճառով, և **3 հոդվածիով զուգորդված 14-րդ հոդվածի** (խտրականության արգելք) **խախտում**, քանի որ բռնությունը եղել է գենդերային հիմքով: Դատարանը, մասնավորապես, նշեց, որ դիմումատուի ամուսինը բռնության է ենթարկել նրան, և որ իշխանությունները պետք է քաջատեղյակ լինեին այդ մասին՝ հաշվի առնելով նրա բազմիցս օգնության համար դիմումները ինչպես ոստիկանությանը, այնպես էլ դատարաններին: Բացի այդ, թեև Ռումինիայում կար ընտանեկան բռնության դեմ բողոքելու և իշխանությունների պաշտպանություն հայցելու համար իրավական դաշտ, որից դիմումատուն ամբողջությամբ օգտվել էր, իշխանությունները նրա գործում չեն կիրառել համապատասխան իրավական դրույթները: Իշխանությունները նույնիսկ պարզել են, որ դիմումատուն իր նկատմամբ ընտանեկան բռնություն է գործադրել և համարել են, որ դա բավականաչափ լուրջ չէ քրեական օրենքի շրջանակներում քննելու համար: Նման մոտեցումը թույլ չի տալիս արդյունավետորեն կիրառել ներպետական իրավական դաշտը և հակասում է կանանց նկատմամբ բռնության միջազգային չափանիշներին: Իրոք, իշխանությունների պասիվությունը սույն գործում արտացոլում էր խտրական վերաբերմունք դիմումատուի՝ որպես կնոջ նկատմամբ և ցույց էր տալիս Ռումինիայում ընտանեկան բռնության դեմ հանձնառության իսպառ բացակայությունը: բացակայություն:

Վոլոդինան ընդդեմ Russia

9 հուլիսի 2019թ.

Այս գործը վերաբերում էր դիմումատուի բողոքին, որ Ռուսաստանի իշխանությունները չեն կարողացել պաշտպանել նրան ընտանեկան կրկնվող բռնություններից, ներառյալ հարձակումներից, առևանգումից, հետապնդումից և սպառնալիքներից: Նա նաև պնդեց, որ Ռուսաստանում գործող իրավական ռեժիմը անբավարար է նման բռնության և կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքի դեմ պայքարելու համար:

Դատարանն արձանագրեց Կոնվենցիայի **3-րդ հոդվածի** (անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելում) **խախտում՝** գտնելով, որ դիմումատուն իր նախկին զուգընկերոջ կողմից ենթարկվել է և՛ ֆիզիկական, և՛ հոգեբանական դաժան վերաբերմունքի, և որ Ռուսաստանի իշխանությունները չեն կատարել Կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորություններով՝ պաշտպանել նրան դաժան վերաբերմունքից: Դատարանը նաև արձանագրեց Կոնվենցիայի **3-րդ հոդվածով զուգորդված 14-րդ հոդվածի** (խտրականության արգելում) **խախտում**: Այս առումով Դատարանը, մասնավորապես, նշել է, որ ընտանեկան բռնությունը Ռուսաստանի օրենսդրության մեջ ճանաչված չէ, և չկան արգելանքի կամ պաշտպանական որոշումներ: Այդ թերացումները հստակ ցույց տվեցին, որ իշխանությունները դժկամությամբ էին ընդունում Ռուսաստանում ընտանեկան բռնության խնդրի սրությունը և կանանց վրա դրա խտրական ազդեցությունը:

Ֆ.Դ.–ն և Ա.–ն ընդդեմ Միացյալ Թագավորության (թիվ 32949/17 և 34614/17)

24 հոկտեմբերի 2019թ.

Այս գործով երկրորդ դիմումատուն, գտնվելով ընտանեկան բռնության ծայրահեղ վտանգի տակ, ընդգրկվել է «Պահպանության ծրագրում», ինչը նաև նշանակում է, որ նրա գույքում որոշակի հարմարեցումներ են արվել (ներառյալ ձեղնահարկում «խուճապի սենյակ» տեղադրելը իր և որդու համար, որի հետ նա ապրում էր երեք սենյականոց տանը): Նա պնդում էր, որ սոցիալական ոլորտում բնակարանային նպաստի վերաբերյալ նոր կանոնները (ոչ պաշտոնապես հայտնի է որպես «ննջասենյակի հարկ») որպես գենդերային բռնության տուժող իր առանձնահատուկ իրավիճակի պատճառով իր նկատմամբ խտրականություն են սահմանում:

Դատարանն արձանագրեց երկրորդ դիմումատուի նկատմամբ Կոնվենցիայի **Արձանագրության 1-ին հոդվածով զուգորդված** (սեփականության պաշտպանություն) **14-րդ հոդվածի** (խտրականության արգելում) **խախտում**: Այն մասնավորապես նշեց, որ կանոնակարգի նպատակը՝ խրախուսել մարդկանց տեղափոխությունը, հակասում է «Պահպանության ծրագրի» նպատակին՝ թույլ տալ գենդերային բռնության տուժողներին մնալ իրենց տներում: Երկրորդ դիմումատուի հետ նույն կերպ, ինչպես բնակարանային նպաստի նոր կանոններին ենթակա մյուսների նկատմամբ վարվելու ազդեցությունը, հետևաբար անհամաչափ էր, քանի որ այն չէր համապատասխանում միջոցի օրինական նպատակին: Ավելին, Միացյալ Թագավորության կառավարությունը որևէ ծանրակշիռ պատճառ չէր ներկայացրել՝ հիմնավորելու ընտանեկան բռնության տուժողներին իրենց տներում մնալու հնարավորության նկատմամբ ծրագրի նպատակի առաջնահերթությունը:

Տիեզիձեն ընդդեմ Վրաստանի

8 հուլիսի 2021թ.

Այս գործը վերաբերում էր վրացական իշխանությունների կողմից դիմումատուի դստերը ընտանեկան բռնությունից պաշտպանելու և այդ հարցի վերաբերյալ արդյունավետ հետաքննություն իրականացնելու ենթադրյալ ձախողմանը: Դիմումատուն պնդեց, որ ոստիկանությունը տեղյակ է եղել իր դստեր կյանքին սպառնացող վտանգի մասին, սակայն անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներ չի ձեռնարկել: Մասնավորապես, նրանց արձագանքը իր և իր դստեր կողմից ներկայացված բազմաթիվ բողոքներին եղել է անհամապատասխան և խտրական:

Դատարանն արձանագրեց Կոնվենցիայի **2-րդ հոդվածով զուգորդված** (խտրականության արգելում) **14-րդ հոդվածի հոդվածի** (կյանքի իրավունք) **խախտում՝** գտնելով, որ վրացական պետությունը չի կատարել դիմումատուի դստեր կյանքը պաշտպանելու իր պարտավորությունները և արդյունավետ քննություն իրականացնելու նրա մահվան փաստով: Այն, մասնավորապես, նշել է, որ ոստիկանությունը պետք է տեղյակ լիներ, որ դիմումատուի դուստրը վտանգի տակ է: Չնայած տարբեր պաշտպանիչ միջոցառումներին, որոնք նրանք կարող էին իրականացնել, նրանք չկարողացան կանխել գենդերային բռնությունը նրա նկատմամբ, որը ավարտվեց նրա մահով: Դատարանը գտավ, որ ոստիկանության անգործությունը կարող էր համակարգային ձախողում համարվել: Անհրաժեշտ էր լուրջ հետաքննություն իրականացնել այն հնարավորության վերաբերյալ, որ ոստիկանության անգործության հետևում եղել է գենդերային հիմքով խտրականությունը և կողմնակալությունը:

Տունիկովան և այլք ընդդեմ Ռուսաստանի

14 դեկտեմբերի 2021թ.

Տե՛ս վերևում, «Անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելում» մասում:

Ա.–ն և Բ.–ն ընդդեմ Վրաստանի (թիվ 73975/16)

10 փետրվարի 2022թ.[4]

Այս գործը վերաբերում էր անհաշտ հարաբերությունների արդյունքում երկրորդ դիմումատուի հոր՝ ոստիկանի կողմից երկու դիմումատուների՝ համապատասխանաբար, դստեր և մոր սպանությանը: Այն նաև վերաբերում էր հետագա հետաքննությանը: Դիմումատուները, մասնավորապես, բողոքել են իշխանությունների կողմից իրենց հարազատներին ընտանեկան բռնությունից չպաշտպանելու և արդյունավետ հետաքննություն չանցկացնելու համար:

Դատարանը սույն գործով արձանագրել է Կոնվենցիայի **2-րդ հոդվածով զուգորդված** (կյանքի իրավունք) **14-րդ հոդվածի** (խտրականության արգելում) **խախտում**: Այն պարզեց, որ, ընդհանուր առմամբ, գործը կարող է դիտվել որպես ևս մեկ վառ օրինակ, թե ինչպես իրավապահ մարմինների ընդհանուր և խտրական

պասիվությունը ընտանեկան բռնության մեղադրանքների առջև կարող է ստեղծել մթնոլորտ, որը նպաստում է տուժողների նկատմամբ բռնության հետագա տարածմանը, զուտ այն պատճառով, որ նրանք կին են: Դատարանը, մասնավորապես, նշեց, որ, չնայած առկա պաշտպանիչ տարբեր միջոցներին, իշխանությունները չեն կանխել դիմումատուների մերձավորների նկատմամբ գենդերային բռնությունը, որն ավարտվել է նրա մահով, և նրանք այդ ձախողումը բարդացրել են պասիվության, նույնիսկ հարմարեցման կեցվածքով ենթադրյալ հանցագործի նկատմամբ, որը հետագայում դատապարտվել էր տուժողի սպանության համար:

Հետագա ընթերցման համար

Տես նաև Եվրախորհրդի **«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքար» (Action Against Violence Against Women and Domestic Violence)** կայքէջը:

Մեդիա կապ.
Հեռ. + 33 (0)3 90 21 42 08

[4]. Այս վճիռը ուժի մեջ կմտնի Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանգամանքներում: